# <u>Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների, բողոքների 2017թ.-ի առաջին եռամսյակի  ամփոփագիր</u>

**2017**թ-ի <u>առաջին եռամսյակի</u> ընթացքում ստացվել է **403** դիմում:

**ա**/ Դրամական օգնություն է խնդրել **356** քաղաքացի: Բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

**բ**/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է **6** քաղաքացի, որից 2-ի խնդրանքը բավարարվել է, 2-ինը՝ մերժվել, 2 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

**գ**/ Առողջապահական բնույթի **17** դիմումից դրական պատասխան է ստացել 16-ը, 1 դիմում ընթացքի մեջ է: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

**դ**/ Աշխատանքի հարցերով դիմած **11** քաղաքացիներից 7-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 2 դիմում մերժվել է, 2 դիմում ընթացքի մեջ է /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

**ե**/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է **1** քաղաքացի և ստացել է դրական պատասխան:

**զ**/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել են **5** քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

**է**/ հողաշինության հարցերով դիմած **5** քաղաքացիներից, բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

**ը**/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել են **2** քաղաքացիներ 2-ն էլ ստացել են դրական պատասխան:

**թ**/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ